



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

W159



~~891.99-82~~
~~Q-92~~

ପ୍ରକାଶ କେନ୍ଦ୍ରିୟ


«Մշակ» յարգեն նօրմ

Վ 159.


891.99-82

Կ-92

44



1002
7440



ԱՐԺԱԼՈՅԱ

Գրական, Գեղարվեստական
և Քննադատական

Ժողովածու

Գ ի թ ք Ա.

Խմբագրեց՝

Ե. Սալոյեան թյ

ԹԻՖԼԻԶ

Տպարան «Էպօխա» Մուղ. պեր. № 8

1915

(4565)

U.S. GOVERNMENT

BUREAU OF THE CENSUS

Population Schedule

1900

6905-444

ՓԱՌՔ ԶԵԶ, ՀԵՐՈՍՆԵՐ...

ՎԵՇ զաղափարին զոհուած հերոսնե՞ր,
Փա՛ռք ու պատի՛ւ ծեզ, ծեր պայծառ անուան,
Որ ահե՛ղ կրովում ընկաք անվէհե՞ր
Հայրենեաց գրկում, զտաք զերեզման...
Փա՛ռք ու պատիւ ծեզ...


Մուս՛յլ, ամպամած, երկնքում հայի՛
Որպէս լուսատո՛ւ, յուսատու աստղե՞ր
Դուք պլազի՛ք... ու մեր ամայի՛
Սրտում ծնեցիք ոսկի երազնե՞ր...
Փա՛ռք ու պատիւ ծեզ...

Տանջուած հայի լացն ու կական՝
Լցրի՛ն վրէժով ծեր հպարտ հոգին,
Սլացա՛ք կովում թօթափել դաժան
Թշնամու լուծը, արնո՛տ, ցաւագին ..
Փա՛ռք ու պատիւ ծեզ...

Վա՛ռ արշալո՛յսը կը ծագէ շուտով,
Մեր երազները կիրականանան.
Ազատութեանը անհուն կարօտով՝
Կը գրկենք սիրով նոր շէմքում զարնան...
Փա՛ռք ու պատիւ ծեզ...

Փա՛ռք ծեզ հերոսներ, ծեր պայծառ անուան,
Չեր սուրբ գործերից կը հիւսենք երգե՞ր,
Ու նոր բողբոջւող նորածիլ զարնան
Թարմ ծաղիկներից փառաց պսակնե՞ր ..
Փա՛ռք ու պատիւ ծեզ...

Գագիկ Մխիթարեան



ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹԵԱՆ ԶԱՆԳԸ

(Նուէր երկու քոյլերին)

Ա-հ, մոռացութիւն, արդեօք այնքան զօրեղ կը լինե՞ս,
որ կարողանաս յիշողութիւնիցս գոլորշիացնել մի պատ-
կեր, որ երբեմնակի վերապրումներիս մէջ, որպէս սոս-
կալի գեհէն կանգնում է ուղեղիս առջե...

Առաւոտ էր, այո՛ օգոստոսեան մի ջերմ առաւոտ:
Վ. գիւղի անտառը ներկայացնում էր մի կատարեալ դը-
ժոխային աշխարհ: Գաղթականները պարուրել էին ան-
տառը իրենց մէջ. այո՛, յիշում եմ մայիսին, երբ մի զով
երեկոյ թիկնած թաց խոտերի վրայ մտորում էի այն
պայծառ օրը, երբ նոյն տեղում գլուխս նրա կըծքին
դրած մտորում էի և ձեռքերով խաղում նորածիլ խոտերի
հետ... և այսօր այն կանաչները չկան. անտառը տնքում
է տասնեակ հազարաւոր ոտների տակ, տնքում է և լալիս՝
բարդիները խոնարհուել են և պտղաւու ծիրանիները թե-
ազուրկ թռչունի պէս լուռ իրենց սև օրն են ողբում...

Քաղիր, պոկիր ծառերի ճղները, անասունները սով-
ած սատկում են, — գոռում էր իր տղային ծերունի գաղ-
թականը:

Եւ ծառերը հեծկլտում էին, նրանց դալար ճղները
մէկիկ—մէկիկ վայր էին թափվում, իսկ տղան դեռ կոտ-
որում էր ճղները: Կարծէք ծառերը զգում էին թշուառ-
ների անել դրութիւնը, զգում էին, որ նրանց պէտք է
օգնել և նրանք արձակում էին նոր ճղներ, որպէս կեր
քաղցած անասունների:

Կանաչ անտառը դարձել էր չոր գետին, անասուն-
ները աղիողորմ բառաչում էին քաղցից և մանուկը չան-
գուում էր մօր կուրծքը:

— Բայց ի՞նչ կուզես. կաթ... չկայ...

Եւ անտառի մի ծայրում մուխ էր բարձրանում պա-
լան—պալան դէպի վեր, դէպի Աստուած և կարծէք այդ
միսի մէջ մարմնացել էր տասնեակ հազարաւորների վրէժ-
ինդրութեան բողոքը:

Եւ այնտեղ չոր գետնի վրայ պառկած էին հազարա-
ւոր հիւանդներ... չոր գետնի վրայ...

—Մի կտոր հաց. մի պուտ ջուր—, մղկտում էր հի-
ւանդը.

Ա՞հ, մոռացութիւն, արդեօք այնքան զօրեղ կը լի-
նե՞ս, որ կարողանաս յիշողութիւնիցս գոլորշիացնել մի
պատկեր, որ երբեմնակի վերապրումներիս մէջ, որպէս
սոսկալի գեհէն կանգնում է ուղեղիս առջե...

Նա մի ջահէլ, սիրուն տղամարդ էր՝ նստած այդ չոր
գետնի վրայ և ձեռքերի մէջ էր իր եռամեայ մանուկը...
նրա օջախի վերջին կայծը...

—Բժիշկ, փրկի՛ր բալիս—, մղկտում էր խեղճ տղա-
մարդը:

Ու բժիշկը փրկեց «բալին» ահ...

Մի քիչ դեղ... մի վայրկեանական ցնցում և... և
խեղճ տղամարդը գրկում ամուր սղմել էր «իր օջախի վեր-
ջին կայծի դիակը»...

—Եաման... եաման բալէս...

—Եաման բալէս... եաման Աստուած, եաման...

Տղամարդ՝ ջահէլ, թիկնաւէտ լալիս էր, մղկտում
ուժգին...

—Բալէս, քանդուած տանս վերջին յոյսը... հա, հա,
հա...

Եւ ջահէլ տղամարդը, որպէս երկաթէ գունդ գետին
խփեց երեխայի դիակը ու ոտքի ելաւ...

—Է՞հ, ես պէտք է գնամ, ես պէտք է լուծեմ, իմ
խեղճ ընտանիքիս մարմնացած վրէժը....

—Է՞հ, մարդիկ, ես փոքրիկ տան զաւակ չեմ, քառ-
ասուն հոգի էր մեր գերդաստանը, հարուստ էր, անուանի
և պատուառուոր... այժմ ես եմ նրա վերջին մնացորդը:
Զարդեցին մերոնց, կոտորեցին սև, մութ ձորերում. ջար-
դեցին, կոտորեցին և ես մնացի: Փոքրիկս, հա, բալէս էն
էլ, զոհ գնաց մեծ արհաւիրքին... հա, հա, հա...

—Է՞հ, ճամբայ տուէք, ես պէտք է գնամ, տեսէք,
հա, հա, հա...լսում էք վրէժխնդրութեան զանգն է խփում...
Օ՞ն ուրեմն յառաջ, աներկիւդ յառաջ դէպի վրէժխնդրու-
թիւնը...

Հա, հա, հա...

Նա խելագարուած էր:

Ա՞հ, մսուացութիւն, արդեօք այնքան զօրեղ կը լինես, որ կարողանաս յիշողութիւնից գոլորշիացնել այդ պատկերը... այդ պատկերը, որ երբեմնակի վերապրումներիս մէջ, որպէս սոսկալի գեհէն կանգնում է երևակայութեանս մէջ...

Ն. Հ. Սեւադա

Էջմիածին.



ՄԱՅՐ ՀԵՅԱՍՏԱՆ


Ո՞վ դու ցրուած անտուն հօտի խղճուկ Մայր,
Ահա արդէն ես տեսնում եմ քեզ ընկած,
Հառաչում ես, դու հեծծում ես ցաւագար՝
Սուրբ մարմինդ արնաշաղաղ, յօշոտուած:

Դու մեռնում ես մեծ երկունքից պայքարի:
Շղթայեակապ, որպէս անարդ մի գերի,
Ու քո անուշ երազներդ լուսեղէն
Խորտակուեցան քո անհամար ցաւերէն:

Բայց ո՞չ, սռւը Մայր, դու չես մեռնի, ես զիտեմ,
Դու պիտ' ապրես, դու պիտ' տեսնիս մի եղեմ.
Նայիր՝ ինչպէս քո որդիքը սիրասուն՝
Խոր վէրքերդ, բիւր ցաւերդ են ամօքում:

Ու դու կելնես դարձեալ զուարթ, ժպտաղէմ,
Քո մեծ հոգին բոյր կշնչէ ծաղկունքէն.
Դէ, քաջացիր, ով ցաւակէզ Մայր անգին
Քեզ պիտ' ծագէ նոր արշալոյս երկնային:

Գուրմարկունի



ՄԵՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԻՆ...

Տիսուր ու մոլար, մտքերիս՝ գերի՝

Լուսկէս գիշերին,

Հոգիս է լալիս, վիշտը խեղճերի՝

Այս խաւար ժամին:

Եւ յանկարծ դուռս մեղմիկ բախում են

Այս տիսուր ժամին,

Տէ՛ր, Աստուած, ով է,- ես մտածում եմ,-

Այս ուշ գիշերին:

Վշտահար սրտով ես ներս եմ կանչում

Այս անկոչ հիւրիս,

Բայց դուռս նորից բախում են, բախում

Ու ներս չեն գալիս:

«Ո՞վ ես դու, Ոզի՞, թէ մարդ» ձայն եմ

Դուռս բախողին: [տալիս

«Ի՞նչ ես աղմկում լուռ մենութիւնս

Այս խաւար ժամին»:

* *

«Մեծ տառապանքն եմ անթիւ՝ խեղճերի

Այս կէս գիշերի

«Այս կէս գիշերին քեզ էլ եմ կանչում,

Որ ելնես մարտի.

«Լոկ խոսքով խղճալ թոյլին, տկարին»

Ճնորքն է տմարդի,

«Հարազատներիդ ես եմ թշնամին,

Դէհ, շուտ, ել մարտի»...

ՎԻՇՏՈՒՆԻ

Վերին-Ազա



ԱՇՈՒՆ

Մի մեծ սոսկալի հրաշք էր պատահել կեանքի վայրերում, մի անսպասելի, չարաբախտ հրաշք. Գարունը չըքնաղ, որ գիտեր սակաւ բացակայ լինել, գնացել է մեզնից շատ հեռու, անհետ ու անդարձ: Ու էն օրից վեր Աշունն է պատել կեանքի վայրերին, որոնք մշուշապատ, անլոյս, անժպիտ միշտ սև են, տխուր, թօշնած ու անբոյր. Էլ թուփ ու ծաղկունք չեն բուրում այնտեղ անուշ, կենսար, ու էլ չի լսվում վաղուց սոխակի նուագը սիրոյ. Քամին է միայն կեանքի վայրերում երգում տխրածայն, վիուկի երգեր:

Եւ այդ սև աշնան անզարդ վայրերում ապրում են անթիւ արիւնոտ սրտեր. Մեռնում են նոքա շուտով, վաղաժամ, թիթեռի նման, չտեսած ո'չ բոյր, ո'չ գարնան հրապոյր, խորքերը լեցուն իղձերով անհուն: Տեսում եմ ահա հովիտը կեանքի լցուած է անմեղ, անբիծ զոհերով, մարդկանց դիակով:

Տեսնում եմ նաև նրանց ոսկորից սև Մահը իր համար պալատ է շինել, իսկ դիակների անթիւ գանգերից գահ է կառուցել ու գահի գլխին դեի քըքիջով հրճվում է, կանչում՝ «Հերոս եմ, արքայ, ով կարայ սրիս նոյնիսկ կամացուկ ու թեթև զարկից չընկնել շնչառապ»

Աւաղ, դեռ երկար նա պիտի ուրախ քըքջայ, թէ կըգայ մի օր ու կըխորտակուի պալատը նրա մեծ և նու փառքից զուրկ կըշրջէ նորից գերանդին ձեռքին նիհար, այլանդակ... Օ-, այո, կըգայ շուտով այն օրը անկման, երբ նորից կեանքի վայրերը արնոտ կըհագնեն գարնան ծաղիկներ բուրեան, ու մեր սրտերը վշտոտ ու լալուկ կըգրկեն պայծառ շողեր ու բուրմունք:

Զան-զիր



Մ Ա Յ Յ

ՊՕԵՏԻՆ

(Նուէր Գուրգէն Նասիբեանին)

Այս ընդհանուր սուզ ու շիւան օրերին
Երբ վարանդ արեան մէջ է շաղախուած,
Դու էլ չերգես խինդ ու ծիծաղ մեր սրտին,
Թո՛ղ քնարդ հնչէ լալուկ, տիսրամած։

Վառ կուսական անբիծ սիրոյն ծարաւի,
Թո՛ղ քո հոգին սիրոյ երգեր ընիւսի.
Քո սիրունին քո վարանն է արեաքամ,
Որ կկանչէ զաւակներին օգնութեան։

Քնարդ լարի՛ր, դուրս ել որպէս մարզարէ,
Խօսքդ—կրակ՝ թո՛ղ բիւր սրտեր փոքորկէ.
Երգի՛ր սէրը եղբայրական, յո՛յս, հաւա՛տ,
Որ նրանք դիմեն հեռուները լուսազարդ։

Այս ընդհանուր սուզ ու լացի օրերին
Չերգես, պօէտ, խինդ ու վայելք դու հային.
Թո՛ղ քնարդ հնչէ երգեր ոգեշունչ
Ու սրափեցնէ մեր սրտերը լուս ու մունջ։

Սարգիս Գալաչեանց.
Թիֆլիզ.



Ա Շ Ո Ւ Ն

Աշունն եկաւ նորից, մռայլ, մքնաշո՞ղ,
Ցուրտը նորից պատեց շուրջս մահաշունց,
Նորից վիշտը ինձ համակեց սիրտ մաշող,
Գարնան օրերն աշխ, փչեցին վերջին շունց...

Սար ու ճորեր, դաշտ ու անտառ, արօտնե՞ր՝
Ամայնացան, ծառ ու տերեւ դալկացան,
Ել չէ ժպտում մեզ արեւը կենսաբեր՝
Ցող ու ծաղիկ մեզ ժպտացին ու անցան...

Ու պարտուած տերեւները ծառների՝
Հա՛ կը բափուին, խոհաւ գետնին զլխիկոր,
Ու սառ քամին ուժգնօրեն կատաղի՝
Կըցրէ այն, մուր անկիւններն հեռաւո՞ր...

Ու մնացին օրերն ամպոտ ու գունատ՝
Որ կանձրեւեն, ու կըսգան տիսրամած,
Աշո՞ւն է աշխ..., սրտիս նման յուսահատ՝
Որ կափսոսայ երազ օրերն իր անցած...

Ո՞ւր մնացին պայծառ օրերն երազկոտ՝
Որ երբեմն կուտային հոգաւս տե՛նց ու սէ՞ր,
Ո՞ւր մնացին այն ծիծեռներն ինձ ծանօթ՝
Որ ականջիս կըմրմնջային նոր յօյսե՞ր...

Չկան նոքա. չկան, անցան, գնացի՞ն,
Անապատ է այժմ շուրջս ամայի,
Խենք հողմերի հառաջանքը տիսրազին՝
Կը հեծեծէ, որպէս գուծկան սեւ մահի...

Աշունն եկաւ նորից, մռայլ, մքնաշո՞ղ,
Ցուրտը նորից պատեց շուրջս մահաշունց,
Նորից վիշտը ինձ համակեց սիրտ մաշող՝
Գարնան օրերն աշխ, փչեցին վերջին շունց...

Գագիկ Մխիթարեան.

Բոստով Դ/Վ.



ԹԵՌԱՄՈՒՄ ԵՆ ՖԱԼԻԿՆԵՐԸ...

Թառամհւմ են ծաղիկները գարուն կեանքիս՝

Վաղանցուկ,

Հնչըվհւմ է մահուան երգը իմ ականջին

Կամացուկ.

**Դարունն անցաւ...թշուառ կեանքիս շուտ յաջորդեց
Ցուրտ աշուն՝**

**Չկայ ծիծաղ, չկայ ժպիտ, երգը լռեց
Իմ հնչուն:**

**Ամայի է շուրջս, անապատ արցունք, արիւն,
Ու աւեր,**

**Մոմայլ հեռվում մնւթն ու անյայտ, վայում է բուն
Վշտասէր:**

**Դուռս է ծեծում ահեղ քամին, ուժգնօրէն՝
Լալագին,**

**Սիրտս է լալիս իմ մտերմի արցունքներէն
Ցաւագին:**

**Մութ գիշերին խօլ քամու հետ՝ ով է լալիս,
Հեծկլտում,**

**Ո՞վ է արդեօք եարին փնտրում, զնում—գալիս՝
Կուրծք ծեծում...**

**Ո՞վ է արդեօք կանչում մթնում՝ «Տւր ես մայրիկ
Սիրասուն...»,**

**Ո՞վ է արդեօք փնտրում բալին, քաղցած, բորիկ,
Ու անտուն...**

**Ո՞վ է նստած սառ շիրիմի մօտ արցունք թափում
Խաւարում,**

**Աև մահերգի մեղեղիներն ասում, յուզվում,
Հառաչում...**

**Ա՛խ, չգիտեմ... մտորհւմ եմ... աշնան գրկում
Ցրտաշունչ,**

**Բիւր թշուառներ են հեծեծում, լալիս, տնքում,
Անմոռունչ...**

**Ու ես տխուր երգս խառնած քամիներին՝
Խենթ—խելառ,**

**Մասնակից եմ հանուր ողբին—աշնան ցաւին
Վշտահար:**

**Աշուն, աշուն, դարդլու աշուն, միս շնուտ անցիր
Հեռացիր**

Մեր վշտերը գրկիր ու տար, մեզ մղոացիր,
Մոռացիր...

Այս ես կուզեմ տեսնել նորից մի նոր գարուն
Ծաղկաշատ՝

Ուրախ դէմքեր, քաղցը ժպիտ, երկինք սիրուն՝
Աստղաշատ.

Ու երկիրը վերածնուած՝ մարդիկ անվիշտ,
Աներեր,

Ապրէին աղատ, մոռնային արցհւնք, վայելէին միշտ
Տենչ ու սէր...

Քո ցուրտ ծոցում կը թառամին մեր վառ կեանքի
Ծաղիկներ,

Այս հեռացիր արնհտ աշուն, դու տանջանքի
Հեղ ընկեր:

Թող չընչուի իմ ականջին ցուրտ մահերգի
Մեղեղին՝

Դեռ կարօտ է տանջուած սիրտս ուրախ կեանքի
Վայելքին...

Դագիկ Միսիթարեան.

Ռոստով Դիվ.



ԹՌՉՆԻԿԼ

....Ու ես թափառում էի անտառի խորքում հրացանը
ձեռքիս՝ անհասկանալի կարծրութեամբ սպանելով փոքրիկ
թռչնիկներին։

Խաղաղ իրիկնաղէմ էր։ Արևը մայր էր մտնում։ Ռո-
ռենի գագաթի վրայ նստած էր մի թռչնիկ՝ դեղնագոյն
կուրծքը դէմ տուած արևի մայր մտնող ոսկէ ճառա-
գայթներին։ Թռչնիկը երգում էր մի աղեկտուր երգ, որի
սրտապատառ հնչիւնները գալարվում էին մորմոքալով
անտառի խորքում ու գնում հեռնւ, հեռնւ....

Կարծես թռչնիկը զառանցում էր....

Նա նայում էր արևմուտքին և տխրում...

Յանկարծ պայթեց հրացանը։ Թռչնիկը վեր թռաւ,
բարձրացաւ դէպի վեր, կարծես կամենալով վերջին ան-
գամ նայել արևին, և քարի նման նետուեց փոքրիկ ձըն-
ծաղիկների մէջ... երբ մօտեցայ նրան, արդէս անշնչա-
ցած էր։

Ես կանգնած էի հրացանիս ձայնից սարսափած անտառում, սպանուած թռչնիկը ձեռքիս։ Տերևների և մանուշակների բոյրերի հետ խառնուել էր վառօղի ծուխի սուր հոտը...

Ինձնում մի ինչ—որ բան շարժուեց...

Ես տխրեցի:

Այն օրուանից թէև տարիներ են անցել, բայց կեանքիս դժուար ըօպէներին երբ ինձ ծանը վէրքեր են հասցնում, յաճախ եմ յիշում այն թռչնիկին և անհուն կսկիծը սրառումս ես աշխատում եմ բարձրանալ դէպի վեր, դէպի յաւիտենական ծշմարտութիւնն ու Գեղեցկութիւնը, բայց երկար չի տեսում այդ, և ես նորից ինձ տեսնում եմ անողոք իրականութեան մէջ...

Ե. Սաղոյեան




ԱԽ, ԻՆՉՈՒ, ԻՆՉՈՒ...

Ա'խ, ինչո՞ւ, ինչո՞ւ մեր այս աշխարհում
Չկայ եւ ոչինչ անվերջ, անքակտում.
Ամեն ինչ ունայն, անմիտ եւ պատրանք,
Ստոր, զգուելի մարդկային արարք։

Մարդիկ ատելի, խարդախ, կեղծաւոր,
Գործերն անմիտ, անվերջ քունաւոր,
Ոգիները փոքր, արարքնեքը ստոր,
Զգացումներն հիւսուած կրքերի բոլոր։

Սրտերը նեխուած մի զարշելի պարկ,
Սիրուն, զարդարուն, զլուխաները դատարկ,
Շինծու արտաքին, ներսը ողջ նեխուածք,
Ա'խ, ինչո՞ւ, ինչո՞ւ և կեանքը մի պատրանք։

Հ. Նազարեանց.



ամա համբուլուս, զանգան ավելացրած է համբուլուս ոչ
առն և աղյումնակը առջանձն պատճենագիր նախամարան նախամարան
դիմում պրուսի ոչ շնորհած առև վիճակույ վիճակույ վիճակույ առև

շնորհած առև վիճակույ վիճակույ վիճակույ

վիճակույ առև

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ


Դու դարաւոր ու հոյակապ չինարի,
Ո՞վ քափրփիեց տերեւներդ բո նօխուն,
Խնչո՞ւ այդպէս դու նայում ես քախծալի,
Վօտառչոր մքան միջին եեծեծում:

Ախ, չար քամին, զուլում քամին սեւ կեանի
Քեզ տատանեց ու կոտրատեց բո ձղներ,
Էն օրից վեր չունիս տերեւ դալարի
Մերկ ու դատարկ սոսափում ես սեւ երգեր:

Բայց դու դարձեալ մի վետաւիր, խղձուկ ծառ,
Կանցնի առուն, կանցնի ձմեռ ցւտալի
Կգայ գարուն, ու երկինքը փրկարա
Քեզ կուղարկի գարնան տնձերեւ զովալի

Ու կծաղկես այն ժամանակ դու նորէն
Տերեւներով դալարագոյն մետախսեայ
Ու բո սոտից տոխակները կկանչեն,
Ողջաւնելով արօալոյսին գեղամայ:

Սարգիս ԴԱԼԱԶԵԱՆ.



ԱՂՈԹ Բ_{III}

(Ստանիսլավ Պաթրուշկուց)

Օրիորդ Դուսիային.

Դու՝ որ իմ մոայլ երազ-ցնողքներիս մէջ խորասուզվում ես Քո թօշնած գարնան գեղեցկութեան պայծառ թևերով, Քո ճոխութեան ու փարթամութեան փայլով, կրակով ոչնչացնող դրախավայրի կարմրավառ վարդով,—

Ո՞վ իմ փայլուն աղաւնեակս...

Շատ տանջանքներ վերապրեցի ես իմ երազ ցնողքներիս մէջ՝ սկսած այն օրից, երբ Քեզ տեսայ վերջին անգամ. սակայն իմ սիրտը դեռ ևս փայլում է էլ աւելի, քան ճառագայթափայլ աստղերը, որոնց Դու շաղ տուիր իմ գարուն կեանքի շէմքին. դեռ ևս իմ արեան միջից դուրս են ցայտում ձեռներ դէպի երջանկութիւնը, որ Դու երբեմն բոցավառել էիր իմ մոայլ հոգում...

Դու՝ որ երեկոյեան պահուն քնքուշ մատներովդ կախարդիչ քնարի վրայ ծանր խոկումներ էիր նուագում հաճոյքի ըոպէների մասին, որ տարուեցին որպէս հեռուն տարուող թևերի թափահարում. նուագեցիր նաև աստղերի մասին, որ ծովի մէջ խորասուզուելով առկայծում են հարաւում արիւնաներկ ցողով, գիշերուայ մասին էլ նուագեցիր, որ ջերմ կրծքի տոչորուող սրտին գուրգուրում են—

Ո՞հ, իմ փայլուն աղաւնեակս...

Քանի անգամ արեգակը մայր էր մտել՝ սկսած այն օրից, երբ Քո երգերի դիւթիչ հնչիւններով Դու մխիթարում էիր իմ մոայլ հոգու տիրութիւնը. մինչև հիմա էլ տեսնում եմ Քո սեորակ աչերը, որ փայլում են անդրերկրային հրճուանքով. տեսնում եմ նաև փայլուն սպիտակ ձեռներդ ինչպէս ձգվում են դէպի ինձ և կրակոտ հպումով են պատասխանում իմ հպումին...

Դու՝ որ խռովայոյզ գիշերները ինձ համար դարձրեր պայծառ օրեր, աննկատելի ու աներևակայելի ցնողքների միջի իրականութիւնը հանգցրիր ինձ համար, մօտիկը

հեռացրիր դէպի անսահման հեռուն, վիրաւոր սրտումս
պլպլացող հուրիրատներ առկայծեցիր և սևաթոյր ծաղիկ-
ներին կեանքի կոչեցիր...

Ո՞հ, իմ փայլուն հրեշտակս...

Այն ըոպէից սկսած՝ Քո վերջին հայեացքը իմ հոգու
հանգած փայլը իր մէջ անդրադարձնելուց յետոյ աշխարհը
հազար անգամ վերաստեղծուեց. մինչև հիմա իսկ տես-
նում եմ Քո փոքրիկ մանկական դէմքը և ոռկեթել վար-
սերի ոռկեթագը գլխիդ շուրջը. տեսնում եմ՝ ինչպէս
երկու արցունքի կաթիլ հոսում են Քո ժպիտի մէջ, և
լսում եմ ինչպէս Քո ձայնիկը գանգատվում է մոայլ
գանգատով...

Դու՝ որ ամեն գաղտնիքի կնիքն ես պոկում և իմ
կեանքի բոլոր անմտութիւնների վրայ տարածելով բոսո-
րագոյն ծիածանը երկնքի մի ծայրից միւսը կարդում ես
ամեն ինչ...

Իմ շողողուն աստղերը դեռ երբէք պտոյտ չէին
եկել այնպիսի խելագար պտոյտով, և Քո ճակատը պսա-
կող փայլը երբէք այնպէս չէր փայլվլել այն ատենագոյն
փայլով, երբ Քեզ կորցրի յաւէտ...

Քո ոտների տակ եմ սփռում իմ աստղերը, Քո գար-
շապարը պարուրում եմ իմ վառ ցնորքների ծածկոյթով,
իսկ Քո ձեռքն եմ տալիս իմ սիրտը, իմ վիրաւոր սիր-
տը...

Յար. Յարութիւննեան

Նախիջևան Դ/Վ.

* *

Աղջիկ ես դու, շուրթը սուտակ, շունչդ հուր,

Հայեացքները—Եգիպտոսի գիշերներ!

Նոր է բացուել կուրծքդ թեթև—ծիւնաթոյր,

Նոր են այնտեղ եռում քնքուշ յուզումներ:

Ես տառապող, հրապուրուող մի հոգի,

Անկարող եմ, անկարող եմ նայել քեզ.

Քեզ նայելով, ես կըլինեմ բոցակէզ,

Ես յուզավառ երկըպագու վայելքի:

Թեթև կըծքիդ երերումներն աննշմար


Ես տեսնելով, թուլանում եմ վայելքից,

Իսկ երբ յանկարծ հեռանում ես իմ աչքից,

Ես տըտմում եմ և աղօթում քեզ համար:

Համբ. Մազմաննեան.

ԼՐՈՒԹԻՒՆԸ



Մայիսեան մի լուսնեակ գիշեր, երբ երգում էին սոխակ-ները, հ. Իգնատիոսի առանձնասենեակը մտաւ նրա կինը։ Նրա դէմքը պատած էր թախիծով, իսկ փոքրիկ լամպարը դողում էր նրա ձեռքում։ Մօտենալով ամուսնուն, նա թօթափեց նրա ուսը և, հեկեկալով ասաց.

—Տէր-տէր, գնանք Վէրօչկայի մօտ։

Առանց գլուխը յետ դարձնելու, հ. Իգնատիոսը ակնոցների տակից խէթ-խէթ և յառած աչքերով երկար նայեց տիրուհուն որ իր ազատ ձեռքով մի շարժումն արաւ ու նստեց ցածլիկ գահաւորակի վրայ։

—Երկուսդ էլ... ինչքան անգութ էք,— արտասանեց նա ծանը կերպով, զօրեղ շեշտելով վերջին վանկերը, և նրա բարի, դէմքը ալանդակուեց քարսիրտ վերաբերմունքի արտայայտութիւնից, կարծես դիմագծերով կամենալով ցոյց տալ թէ, ինչպիսի դաժան արարածներ են— ամուսինը և աղջիկը։

Հ. Իգնատիոսը ծիծաղեց, ծածկեց գիրքը և տեղից վեր կացաւ։ Նա վերցրեց ակնոցները, զրեց պատեանի մէջ և մտածմունքի մէջ ընկաւ։ Մեծ, ու միրուքը, որը հիւսուած էր արծաթէ թէլերով, գեղեցիկ ծալքերով ընկած էր նրա կրծքին և կամացուկ բարձրանում էր խոր շունչ քաշելիս։

—Դէ, գնանք, դիմեց նա տիրուհուն։

Օ՛գա Ստեղանովնան արագ վեր կացաւ և քծնողական երկչու ձայնով խնդրեց։

—Բայց տես, չյանդիմանես նրան, տէր-տէր. դու էլ գիտես նա ինչպէս է...»

Վէրայի սենեակը գտնվում էր միջին յարկում։ Նեղլիկ, փայտէ սանդուխքը ճկվում և հեծում էր հ. Իգնատիոսի քայլերի տակ։ տէր-հայրը, լիքը-լիքը և բարձրահասակ էր, ուստի և գլուխը կոացել էր, որ չդիպչի վերին յարկի յատակին, և գարշանքով խոժոռում էր դէմքը, երբ կնոջ բաճկոնակը թեթև դիպչում էր նրա երեսին։ Նա գիտեր, որ իր խօսակցութիւնից Վէրօչկայի յետ ոչինչ չի դուրս գալ։

—Ինչու համար, —հարցրեց Վէրան, երբ տեսաւ ծնողներին։ Հոլանի թեերից մէկը բարձրացնելով դէպի աչքերը, իսկ միւս ձեռքն ընկած էր ամառային սպիտակ վերմակի վրայ և համարեա չէր զանազանվում նրանից, մինչ այն աստիճան նա սպիտակ, թափանցիկ ու սառն էր։

—Վէրօչկա...—սկսեց մայրը, հեկեկաց և լռեց։

—Վէրա, — ասաց հայրը, աշխատելով մեղմացնել իր կոշտ

100
44
45

ու կոպիտ ձայնը.—Վէրա, ասա մեզ, ի՞նչ է եղել քեզ
Վէրան լուռ էր.

—Վէրա, միթէ մենք՝ մայրդ ու ես արժանի չենք քո վըս-
տահութեան։ Միթէ մենք քեզ չենք սիրում, միթէ դու մեզնից
աւելի մօտիկ անձնաւորութիւն ունիս։ Ասա մեզ քո վիշտը հա-
ւատա ինձ՝ փորձուած ծերունուս, այն ժամանակ դու հանգիստ
կը լինես, եւ մենք կը հանգստանանք։ Նայիր քո ծերուկ մօրը,
տես թէ ինչպէս է տանջւում…

—Վէրօչկա…

—Իսկ ինձ համար…—նրա կոշտ ձայնը դողաց, կարծես
նրանում մի բան կոտրուեց։— իսկ ինձ համար, կարծում ես,
հեշտ է։ Միթէ ես չեմ տեսնում, որ քեզ կրծում է մի ինչ—որ
վիշտ… Բայց, ի՞նչ վիշտ, ու ես՝ քո հայրը չգիտէ թէ այդ ինչ
վիշտ է։ Միթէ այգպէս պէտք է լինի։

Վէրան լուռ էր։ Հ. Իգնատիոսը մի առանձին զգուշութեամբ
շփեց մօրուքը, կարծես վախենալով, որ մատները հակառակ իր
կամքին կը վարսուեն նրա մէջ, և շարունակեց։

—Կամքիս հակառակ դու գնացիր Պետրօգրադ։ միթէ ես
անիծեցի, անհնաղանդութեանդ համար, միթէ փող չտուի, կամ
չէ՞ գուրգուրում քեզ։ Դէ, ի՞նչ ես լուռ կացել։ Ահա այդ էր քո
Պետրօգրադը։

Հ. Իգնատիոսը լոեց։ Նրան պատկերացաւ մի ինչ-որ վիթ-
խարի, որձաքարերի մէջ պարուրուած, անյայտ վտանգներով լի
օտար, անտարբեր մարդկանցով, ուր իր թոյլ Վէրան, միայնակ էր
և ուր կործանեցին նրան։ Մի անզուսպ ատելութիւն բարձրացաւ
հ. Իգնատիոսի հոգում դէպի այդ զարհուրելի և անհասկանալի
քաղաքը, և բարկութիւն՝ իր աղջկայ վրայ, որ լոռում էր, յամառ-
օրէն լոռում։

—Պետրօգրադը այստեղ ոչ մի գործ չունի,—թախծօրէն ա-
սաց Վէրօչկան և փակեց աչքերը։— իսկ ինձ ոչինչ չի եղել։ Լաւն
այն է, գնացէք պառկէք, արդէն ուշ գիշեր է։

—Վէրօչկա,—հեծեծաց մայրը,—աղջիկս, բաց սիրտդ…

—Ախ մայրիկ,— անհամբերութեամբ կտրեց նրա խօսքը
Վէրան։

Հ. Իգնատիոսը նստեց աթոռի վրայ և ծիծաղեց։

—Ուրեմն այդպէս. նշանակում է, ոչի՞նչ,— հեղնանքով հար-
ցրեց հայրը։

—Հայրիկ,—սաստիկ յուզուած ձայնով ասաց Վէրան, վեր-
կենալով անկողնուց։—Դու դիտես որ ես սիրում եմ քեզ և մայ-
րիկին. բայց դէ, ի՞նչ անեմ մի քիչ տխուր եմ։ Այս բոլորը կան-
ցնի։ Աւելի լաւ է՝ գնացէք քնեցէք, իմ քունն էլ է տանում։
Իսկ վաղը, կամ մի ուրիշ ժամանակ կը խօսենք

Հ. Իգնատիոսը այնպէս ուժգնութեամբ վեր կացաւ տեղից, որ
աթոռը դիպաւ պատին, և նա բռնելով կնոջ ձեռքից, ասաց.

—Գնանք,

—Վէրօչկա…

— Գնանք ասում եմ քեզ, — գոչեց հ. Իգնատիոսը:
— Եթէ նա Աստծուն մոռացել է, էլ մենք ի՞նչ... էլ մենք
ի՞նչ ենք...

Եւ համարեա ոյժով նա դուրս տարաւ Օլ'գա Ստեղանով-
նային:

Երբ նրանք դած էին իջնում սանդուղներից, Օլ'գա Ստե-
պանովնան դանդաղացնելով քայլերը, ասում էր դառնութեամբ:
— Ու—ու, տէր-տէր, այդ դու, դու դարձրիր նրան այդպէս.
Նա քեզանից է սովորել այդ ամենը, և դու էլ պատասխանառու-
ես... Ա՛խ, ես անբախտս...

Եւ տիրուհին լաց եղաւ, յաճախ կկոցելով աչքերը, որով-
հետև սանդուխի աստիճանները չէր տեսնում և ոտքն այնպէս էր
փոխում, որ կարծես ներքեռմ անդունդն էր, և ինքը պէտք է
գլորուէր նրա մէջ:

Այդ օրուանից հ. Իգնատիոսը դադարեց աղջկայ հետ խօսե-
լուց, իսկ աղջիկը, կարծես չէր նկատում այդի Առաջուայ նման
նա պառկած էր լինում իւր սենեակում, կամ ման էր գալիս և
շուտ-շուտ ձեռքի ափերով սրբում էր աչքերը. կարծես նրանց մէջ
բան ընկած լիներ. և երկուստեր լուսութիւն պահպանող անձնա-
ւորութիւնների մէջ կատակ ու ծիծաղ սիրող տիրուհին նուաս-
տացել և բոլորովին կորցրել էր իրեն, չիմանալով ոչ խօսելիքը,
ոչ անելիքը:

Երբեմն Վէրան դուրս էր գալիս մանգալու:
Յիշեալ խօսակցութիւնից մի շաբաթ յետոյ լստ սովորակա-
նին գիշերը նա դուրս եկաւ. գնաց ման գալու և այլես չը վերա-
դարձաւ. նա ընկել էր գնացքի տակ, որը նրան երկու կէս էր
արել:

Հ. Իգնատիոսը ինքը թաղեց նրան:

Մայրը եկեղեցի չէր եկել, որովհետև աղջկայ մահուան լու-
ռը իմանալուն պէս, կաթուած էր ստացել. նա զրկուել էր ոտ-
քերից, ձեռքերից, լեզուից, և նա անշարժ պառկած էր կիսախա-
ւար սենեակում: Նա լսում էր զանգի զօղանջիւնը. նա տեսնում
էր թէ ինչպէս բոլորը դուրս էին գալիս եկեղեցուց, ինչպէս էին
երգում իրանց տան առաջ երգիչները, ու աշխատում էր բար-
ձրացնել ձեռքը՝ երեսը խաչակնքելու, բայց ձեռքը չէր հնա-
զանդվում: Ուզում էր ասել՝ «Մնաս բարե, Վէրա», բայց լեզուն
ընկած էր բերնի մէջ իրրե մի ծանր և ահագին բան. և նրա
դիրքը այնքան հանգիստ էր, որ եթէ սէկը տեսնէր նրան, այն-
պէս կը մտածէր, որ նա հանգստանում է կամ քնած է: Միայն
աչքերն էին բաց:

Յուղարկաւորութեանը շատ ժողովուրդ կար եկեղեցում, թէ հ.
Իգնատիոսի ծանօթներից և թէ անծանօթներից դրանք, ամենքը
ևս խղճում էին Վէրային, որ այդպիսի սարսափելի մահով էր
մեռել, և աշխատում էին հ. Իգնատիոսի շարժուածքների ու ձայ-
նի մէջ դտնել նրա ծանր վշտի նշանները: Առհասարակ նրանք

չէին սիրում հ. Իգնատիոսին, որովհետեւ նա վարուելու եղանակի մէջ դտժան էր և հպարտ, ատաւմ էր մեղաւորներին և չէր ներում նրանց, բայց ինքը միաժամանակ և՛ նախանձկոտ էր, և՛ անշափ շահասէր. նա օգտվում էր ամեն մի հանգամանքից, որպէս զի ծխականներից աւել պոկի. ուստի և ամենքը ևս ուզում էին տեսնել նրան տանջուած, կոտրուած և բնազդմամբ զգում էին, որ նա կրկնակի մեղաւոր է աղջկայ մահուան համար, որ իրեւ դաժան հայր և վատ քահանայ, չէր կարողացել մեղքից աղատ պահել նոյն իսկ իր հարազատին և ամենքն էլ փորձիչ հայեացքով դիտում էին նրան, իսկ նա, կարծես զգալով իւր թիկունքին յառած բազմաթիւ հայեացքները, մտածում էր ոչ թէ մեռած աղջկայ մասին, այլ այն մասին, թէ ինչպէս անէր, որ իր վարկը բարձր պահէր:

—Ծիսից ելած քահանայ է,—ասաց հիւսն Կարզինով՝ գլխով ցոյց տալով քահանային, որ չէր տուել իր շինած շրջանակների վարձ հինգ ըուբլին:

Գլուխը բարձր բռնած, հաստատուն քայլերով հ. Իգնատիոսը գնաց գերեզմանատուն և նոյն կերպ էլ վերադառն տուննեւ միայն ամուսնու սենեակի դռան առաջ նրա մէջքը մի փոքր թեքուեց, բայց այդ էլ կարող էր լինի նրանից, որ այդ տան դռների մեծմասը ցածր էր նրա բարձր հասակի համար։ Աւելի լոյս տեղից մտնելով սենեակ, նա դժուարութիւնը կարողացաւ ճանաչել կնոջ երեսը, իսկ երբ տեսաւ, զարմացաւ որ նա բոլորովին հանգիստ է, իսկ աչքերում չկան արցունքներ, չկային այդ աչքերում նոյն իսկ վշտի կամ բարկութեան արտայայտութիւն, — նրանք յամռացել ու լոել էին, ծանր, յամառ լոռութեամբ, ինչպէս և փետուրների մէջ կորած նրա անզօր մարմինը։

—Հը, հիմա քեզ ինչպէս ես զգում, — հարցրեց հ. Իգնատիոսը։ Սակայն տիրուհու շրթունքները համը էին. աչքերն էլ ոչինչ չէին ասում. հ. Իգնատիոսը ձեռքը դրաւնրա ճակատի վրայ։ Նա սառն էր և տամուկ։ Օ՛գա Ստեղանովնան ոչնչով չարտայայտեց, թէ զգաց ձեռքի հպումը. և երբ հ. Իգնատիոսը վերցրեց ձեռքը, երկու գորշագոյն խոր աչքեր անթարթ նայում էին, նրան որոնք լայնացած բրերի պատճառով բոլորովին սև գոյնի էին նմանում. նրանց մէջ չկար ոչ վիշտ, ոչ բարկութիւն։

—Դ' է, ես գնում եմ իմ սենեակս, — ասաց հ. Իգնատիոսը, զգալով երկիւղ ու սառսուռ, նա անցաւ ընդունարանը, որտեղ ամեն ինչ մաքուր էր և կարգին էր, ինչպէս միշտ, իսկ սպիտակերես քողով բազկաթոռները սաւանների մէջ փաթաթուած մեռելների էին նմանում։ Լուսամուտներից մէկում կախուած էր երկաթալար վանդակը, որի դռնակը բաց էր, իսկ մէջը դատարկ։

—Նաստասիա, — բարձրաձայն կանչեց հ. Իգնատիոսը, և իւր ձայնն իրեն թուաց կոպիտ ու անբնական այդ խաղաղ սենեակներում, իւր աղջկայ թաղումի անմիջապէս յետոյ։

—Նաստասիա, — ցածր ձայնով կանչեց նա, ու ուր է դեղձանիկը։

Խոհարարունին, որ շատ լաց լինելուց քիթն ուռել էր և ճակնդեղի նման կարմրել, կոշտ ձայնով պատասխանեց.

—Հասկանալի է, թէ ուր է. թռել է:

—Ինչու արձակեցիր—յօնքերը կիտած հարցրեց հ. Իգնատիոսը:

Նաստասիան նորից լաց եղաւ, և սրբելով աչքերը գլխի չթէ ծածկոցի ծայրով, արցունքները աչքերին ասաց:

—Օրիորդի հոգին էր... Միթէ կարելի էր նրան պահել:

Եւ հայր Իգնատիոսին թռւաց, որ գեղնագոյն ուրախ դեղձանիկը, որ միշտ գլուխը կախ զցած երգում էր, ճիշտ որ Վէրայի հոգին էր, և եթէ նա չթռչէր վանդակից, չէր կարելի ասել որ Վէրան մեռել է: Եւ նա է՛լ աւելի բարկացաւ խոհարարունու վրայ և գոչեց.

—Դուրս,—և երբ Նաստասեան իսկոյն չգտաւ դուռը, նա աւելացրեց.—յիմար:

II

Թաղումից յետոյ լոռութիւն տիրեց փոքրիկ տնակում: Սակայն անդորրութիւն չէր այդ, որովհետև անդորրութիւնը—միայն ձայների բացակայութիւն է. մինչդեռ այդ ճնշող լոռութիւն էր, որովհետև նրանք, որոնք լսում են, և կարող են խօսել, բայց չեն կամենում:

Այդպէս էր մտածում հ. Իգնատիոսը, երբ մտնում էր ամուսնու սենեակը և հանդիպում նրա յամառ հայեացքին, այնչափ ծանր, որ կարծես ամբողջ օդը միապապաղ արճիճ դարձած՝ ճընշում էր նրա գլուխն ու թիկունքը: Այսպէս էր մտածում նա, երբ դիտում էր աղջկայ նօտաները, որոնց մէջ տպաւորուել էր նրա ձայնը, նրա գրքերը և նկարը.—մի մեծադիր, իւղաներկ նկար, որ իւր հետ բերել էր Պետրօգրադից:

Պատկերը դիտելու մէջ հ. Իգնատիոսը որոշ կարգաւորութիւն էր ստցրել. նախ դիտում էր նրա այտը, որ աւելի լուսաւորուած էր նկարի մէջ և պատկերացնում էր այն քերծուածը, որ կար Վէրայի մահացած այտի վրայ և որի առաջ գալու պատճառը չէր կարողանում հասկանալ: Եւ ամեն անգամ խոր մտածողութեան մէջ էր ընկնում այդ պատճառների առիթով,—եթէ գնացքն էր կպել, ապա ամբողջ գանգը ջախջախուած կը լիներ, այն ինչ մեռած Վէրայի գլուխը բոլորովին անվնաս էր մնացել:

Գուցէ մէկը ոտքով դիպել էր, դիակը վերցնելիս, կամ անզգութեամբ եղունգով քերել էր:

Բայց Վէրայի մահի մանրամասնութիւնների վրայ երկար մտածելը զարհուրելի էր, և հ. Իգնատիոսը անցնում էր նկարի աչքերին: Դրանք սև էին, գեղեցիկ, երկար թերթեանունքներով, որոնց ներքև երկար ստուեր էր ընկած, աչքի սպիտակուցները պայծառ էին թվում և երկու աչքն էլ, կարծես, պարփակու-

ած էին սղի սեագոյն շրջանակի մէջ։ Դրանց տարօրինակ արտայայտութիւն էր տուել անյայտ, բայց տաղանդաւոր նկարիչը՝ կարծես աչքերի և նրանց մէջ, որին նայում էին աչքերը, փռուած էր մի բարակ և թափանցիկ մաշկ։ Մի քիչ նմանում էր դաշնակի սև խուփի, որի վրայ լինում է ամառային փոշու բարակ շերտ, որ մեղմում է փայտին տուած ցոլքը։ Սակայն հ. Իգնատիոսը ինչ կերպ էլ որ տեղաւորում էր պատկերը թէկ աչքերը անդադար հետեւում էին նրան, բայց ոչինչ չէին ասում, լուռ էին, իսկ լուռթիւնը այնպէս պարզ էր, որ կարծես կարելի էր լսել. և հ. Իգնատիոսը աստիճանաբար սկսեց մտածել, որ ինքը լսում է լուռթիւնը։

Ամեն առաւօտ, պատարագից յետոյ, հ. Իգնատիոսը գալիս էր ընդունարան, մի հայեացքով դիտում էր դատարկ վանդակը և սենեակի բոլոր ծանօթ կահ-կարասիքը, նստում էր գահաւորակի վրայ, աչքերը փակում և լսում, թէ ինչպէս ամբողջ տունը լուռ էր։ Այդ շատ տարօրինակ էր։ Վանդակը հանդարտ և հեզ լուռ էր, և այդ լուռթեան մէջ զգացվում էր եւ վիշտ, եւ արցունք, եւ հեռաւոր մահացած ծիծաղ։ Իսկ կնոջ լուռթիւնը, որ փոքր ինչ մեղմում էին պատերը, յամառ էր, ծանր ինչպէս արձիճը, և սարսափելի, այն աստիճան սարսափելի, որ հ. Իգնատիոսին նոյն իսկ ամենատաք օրերը ևս թվում էին սառը, գերեզմանի նման սառը, և մահու նման առեղծուած էր աղջկայ լուռթիւնը, որ հէնց իւր համար էլ կարծես տաժանելի էր, և անչափ կը ցանկանար մի խօսք ասել, բայց մի ինչ—որ զօրեղ ու բութ, մեքենայի պէս բռնում էր նրան անշարժ և ձգում էր լարի պէս։ և հեռաւոր ծայրերից մինում լարն սկսում էր տատանուել և մեղմ, երկչոտութեամբ ու խղճալի ձայնով ծլնգալ։ Հ. Իգնատիոսը ուրախութեամբ և երկիւղով որսում էր այդ կեանիք ստացող ձայնին և թեկրով բազկաթոռի ոտներին յենուած, գլուխն առաջ տարած, սրտատրոփ սպասում էր, թէ ձայնը երբ կը հասնի իրեն։ Բայց ձայնը կտրվում էր և լուռմ։

—Դատարկ բաներ են,—բարկացած ասում էր հ. Իգնատիոսը և բազկաթոռից վեր կենում, առաջուայ նման գլուխը բաձր բռնած։ Նա պատուհանից տեսնում էր արևի մէջ կորած հրապարակը՝ կլոր և հաւասար քարերով և դիմացը սալարկած մառանի քարէ պատը։ Անկիւնում կանգնած էր կառապանը, որ նման էր կաւէ արձանի, և անհասկանալի էր թէ ինչո՞ւ է նա այնտեղ կանգնել, երբ ամբողջ ժամերով ոչ մի անցորդ չէր երևում։

III

Հնտաանիքից դուրս հ. Իգնատիոսը շատ առիթ ունէր խօսելու, եկեղեցական սպասաւորների և ծխականների հետ ծիսակատարութեան ժամանակ, և երբեմն էլ գնալով ծանօթների մօտ, որտեղ նա պըսփերանս էր խաղում։ Բայց երբ տուն էր վերադառնում, նրան այնպէս էր թվում, թէ ամբողջ օրը լուած է

Եղել։ Այդ նրանից էր, որ հ. Իգնատիոսը ոչ ոքի հետ չէր կարող խօսել իւր համար կարևոր նշանակութիւն ունեցող գլխաւոր հարցի մասին, որի վրայ ամեն գիշեր մտածմունքների մէջ էր ընկնում, թէ ինչից մեռաւ Վէրան։ Հ. Իգնատիոսը չէր կամենում, հասկանալ, որ այժմ այլ ևս այդ բանն իմանալ անկարելի է և կարծում էր, թէ դեռ ևս հնարաւոր է։ Ամեն գիշեր, այժմ այդ գիշերներն արդէն նրա համար անքուն էին դարձել, — երևակայում էր այն բոպէն, երբ տիրուհու հետ ուշ՝ կէս գիշերին, կանգնած Վէրայի մահճակալի մօտ, խնդրում էր նրան՝ «Ասա», և երբ յիշուրութիւններով հասնում էր այդ բառին, այնուհետև մնացեալն այլ ևս չէր պատկերանում այնպէս, ինչպէս եղել էր։ Նրա զոց աչքերը, որ անցեալի մթութեան մէջ դեռ ևս պահպանել էին այն գիշերուայ կենդանի, անաղօտ պատկերը, տեսնում էին թէ ինչպէս Վէրան նստում էր անկողնում, ժպտում, ասում... Բայց ինչ էր ասում։ Եւ Վէրայի այդ չարտայայտած խօսքը, որ ամեն ինչ պիտի պարզէր, թվում էր մինչ այն աստիճան արտասուելու մօտ էր, որ եթէ ականջը մի փոքր թեքէր սրտի բարախումը կանգնեցնելու, կարծես կարող կը լինէր լսել, բայց միւնոյն ժամանակ այդ խօսքն հեռուից յուսահատութիւն բերելու չափ հեռուից էր արտայայտում։

Հ. Իգնատիոսը վէր էր կենում անկողնուց, ծալած ձեռները դէպի առաջ էր պարզում և թափահարելով խնդրում.

—Վէրա...

Եւ պատասխանը միայն լռութիւնն էր։

Մի անգամ երեկոյեան հ. Իգնատիոսը գնաց Օ՛գա Ստեղանովնայի սենեակը, որի մօտ արդէն մի շաբաթ էր ինչ չէր եղել, նստեց նրա սնարի մօտ և, խուսափելով նրա յամառ, ծանր հայեացքից, ասաց.

—Տիրուհի, կամենում եմ Վէրայի մասին հետդ խոսել։ Լըսում ես,

Աչքերը լռում էին։ Եւ հ. Իգնատիոսը ծայնը բարձրացնելով, խօսեց հրամայողական և խստութեամբ, այնպէս ինչպէս խօսում էր խոստովանողների հետ.

—Ես գիտեմ, որ դու մտածում ես, իբր թէ ես եմ եղել Վէրայի մահուան պատճառը։ Բայց այդպէս մի մտածիր. միթէ ես քեզանից պակաս էի սիրում նրան։ Տարօրինակ կերպով ես մտածում... ես խիստ էի, բայց միթէ դա արգելում էր նրան իւր կամեցածն անել։ Արհամարեցի հայրական արժանապատւութիւնս, խոնարհութեամբ ճկեցի վիզս, երբ նա առանց կը ելու երկիւղ իմ անէծքից, ելաւ գնաց... այնտեղ։ Իսկ դու, դու չէ՞ր որ խնդրում էիր նրան մնալ, և չէի՞ր լաց լինում, պառաւ, մինչև որ չհրամայեցի լոել։ Մի՞թէ ես ծնեցի նրան այդչափ քարասիրտ։ Չէ՞ր յիշեցնում միշտ Աստուծոյ մասին, խոնարհութեան և սիրոյ մասին։

Հ. Իգնատիոսը շտապով նայեց ամուսնու աչքերին և երես շուռ տուեց։

— Ի՞նչ կարող էի անել նրան, եթք նա իր սիրտը բաց չէր անում իմ առաջ, իր ցաւը յայտնում: Թէ խնդրել էր՝ խնդրել եմ: Ի՞նչ է, քո կարծիքով ծունկ պիտի չոքէի իմ աղջկայ առաջ և լայի պառաւ կնոջ նման: Ես ի՞նչ կարող էի իմանալ թէ նրա գլխում ի՞նչ կար... Դաժան, քարսիրտ աղջիկ...

Հ. Իգնատիոսը բռունցքով ծնկանը զարկեց:

— Սիրոյ կայծ չը կար նրա մէջ, ահա թէ բանը ինչումն է: Իսկ իմ մասին ի՞նչ ասեմ, յայտնի է, որ ես... բռնակալ եմ... Բայց քեզ հօ սիրում էր: Գոնէ ասէր քեզ, որ լալիս էիր... Եւ ստորանում... Հ. Իգնատիոսը անձայն ծիծազեց:

— Սիրում էր: Երսի, հէնց քեզ մխիթարելու համար էլ այդպիսի մահ ընտրեց: Դաժան ամօթալի մահ: Մեռաւ ցեխ ու կեղտի, աւազի մէջ... Ամօթից փողոց դուրս գալ չեմ կարողանում. բեմ դուրս գալ ամաչում եմ. քաշվում եմ Աստծուց: Դաժան, անարժան աղջիկ... Գերեզմանի մէջ իսկ անէծելը...

Եթք հ. Իգնատիոսը դարձաւ և նայեց ամուսնուն, նա արդէն ընկած էր անզգայ և միայն ուշքի եկաւ մի քանի ժամից յետոյ: և եթք ուշքի եկաւ, նրա աչքերը առաջուայ նման լուռ էին և չէր կարելի հասկանալ թէ յիշում է արդեօք հ. Իգնատիոսի ասածները՝ թէ ոչ: Հէնց նոյն գիշերը, որ մի լուսնկայ, խաղաղ գիշեր էր,— հ. Իգնատիոսը ոտքերի ծայրերի վրայ, որպէսզի կինն ու հիւանդապահը չլսեն, բարձրացաւ սանդուխներով և մտաւ Վէրայի սենեակը: Միջնայարկի լուսամուտը Վէրայի մահուան օրից չէին բացուել, ուստի օդը չոր ու տաք էր, մի քիչ էլ ցերեկուանից տաքացած թիթեղեայ տանիքի հոտով: Բնակարանը ի՞նչ որ անբնակ և երեսից ձգուածի տպաւորութիւն էր թողնում, որտեղ երկար ժամանակ մարդու ոտք չէր կոխել և պատերի տախտակները կահ-կարասիքը և միւս առարկաները անընդհատ քայքայում էր, հոտում: Լուսնեակի լոյսը պայծառ շողերով ընկած էր լուսամուտի և յատակի վրայ և սպիտակ, ամենայն հոգատարութեամբ լուացած տախտակներից անդրադառնալով մթնաշաղի լուսով անկիւններն էր լուսաւորում, իսկ ճերմակ, մաքուր մահճակալը, երկու բարձերի հետ թվում էին եթերային, տեսլական. հ. Իգնատիոսը բաց արաւ լուսամուտը և թարմ օդը համարձակ հոսանքով ներս խուժեց սենեակը՝ հետը բերելով և փոշու, և մօտիկ գետակի ու ծաղկող լորենու հոտը: Իսկ հեռուից հազիւ-հազ լսվում էր խմբական երգի ձայնը,— երսի մակոյկով զբօնում և երգում էին, բորիկ ոտներով, անձայն քայլերով, սպիտակ ուրուականի նման, հ. Իգնատիոսը մօտեցաւ դատարկ անկողնուն, ծունկ չոքեց և երեսը ցածր ընկաւ բարձերի վրայ ու գրկեց այնտեղը, որտեղ պէտք է լիներ Վէրայի դէմքը: Երկար ժամանակ ընկած էր այդպէս: Հեռուից լըսող երգն աւելի բարձրացաւ և յետոյ լոեց, իսկ նա դեռևս ընկած էր անշարժ և երկար, սև մազերը փուռել տարածուել էին ուսերի և անկողնի վրայ:

Հուսինը շուռ եկաւ և սենեակի մէջի խաւարը աւելի թանձրացաւ, երբ հ. Իգնատիոսը գլուխը բարձրացրեց և շնչաց, որի մէջ երկար ժամանակ թագցրած, չարտայայտուող ծնողական սիրոյ ձայներն էին լսվում,—և ինքն ականջ դնելով իւր ձայնին այնպէս, որ կարծես լսողը ոչ թէ ինքն էր, այլ Վէրան:

—Անգին աղջիկս, Վէրա: Զգում ես, թէ ինչ է նշանակում—աղջիկս: Զաւակս: Իմ սրտի հատոր և իմ արիւն, և իմ կեանք .. Քո ծերունի... Ծերուկ հայրդ, արդէն ալեզարդ, ուժից ընկած, թուլացած...

Հ. Իգնատիոսի ուսերը թոթվում էին և նրա ամբողջ հըսկայական իրանը ցնցվում էր: Զսպելով սառսուռը, հ. Իգնատիոսը քնքշութեամբ, կարծես, փոքրիկ մանկան էր շնչում.

—Ծերուկ հայրդ... Խնդրում է քեզ: Ո՛չ, Վէրա, աղերսում է, լալիս է: Բայց նա երբէք լաց չէ եղել: Քո վիշտը, անգին զաւակս, քո տանջանքը,—իմս են: Աւելի, աւելի քան իմս են:

Հ. Իգնատիոսը շարժեց գլուխը:

—Աւելի, Վէրօչկա: Է՛, ինչ է մնացել ինձ՝ ծերուկիս համար-միայն մահ: Իսկ դու... Ախը եթէ դու իմանայիր, թէ մինչ որ աստիճան քնքուշ ես ու թոյլ, և երկչոտ: Յիշում ես երբ մի անդամ մատդ ծակեցիր և արիւն կաթեց դու լաց եղար: Իմ անգին զաւակս: Զէ՞ որ դու էլ ինձ ես սիրում, սաստիկ ես սիրում գիտեմ: Ամեն առաւօտ ձեռքս համբուրում ես: Ասա, պատմիր, ինչն է տանջում քո վլուխը և ես,—ահա այս ձեռքերովս,—կը խեղդեմ քո վիշտը. Այս ձեռքերի մէջ դեռ շատ ոյժ կայ զաւակիս պաշտպանելու համար:

Հ. Իգնատիոսի մազերը թոթուեցան:

—Ասա:

Հ. Իգնատիոսը աչքերը յառեց պատին և ձեռները մեկնեց:

—Ասա:

Սենեակում անդորրութիւն էր տիրում, իսկ հեռուից, շատ հեռուից լսվում էր գնացքի շարունակ և անընդհատ սուլոցը:

Հ. Իգնատիոսը երբ լայնացած բբերով աչքերը չորս կողմը յածեց, կարծես նրա առաջ պատկերացած լինէր այլանդակուած դիակի զարհուրելի ուրուականը. նա դանդաղ վէր կացաւ չոքած տեղից և մտամոլոր շարժումով դէպի գլուխը տարաւ լայն բաց արած և ջղածգաբար ուղղած մատները և մի քիչ յետ քաշուելով դէպի դուռը, հ. Իգնատիոսը անզուսպ թափով նորից շնչաց.

—Ասա...

Եւ պատասխանը միայն լուսթիւնն էր:

IV

Հետեւալ օրը հ. Իգնատիոսը սովորականից վաղ միայնակ ճաշելուց յետոյ գնաց գերեզմանատուն, առաջին անդամ աղջկայ մահից յետոյ: Տօթ էր, խաղաղ և ամայի, կարծես այդ տօթ օրը միայն լուսաւորուած գիշեր լինէր, բայց իւր սովորութեան համաձայն հ. Իգնատիոսը ուղղեց մէջքը, խիստ հայեացքով

նայեց չորս դին ու մտածեց, թէ ինքը դարձեալ առաջուայ նման է: Նա չէր նկատում ոչ ոտերի նոր զգացուող սաստիկ թուլութիւնը, ոչ էլ այն, որ իւր երկար մօրուսը բոլորովին ճերմակել էր, կարծես, սաստիկ ցուրտը զարկել սպիտակ եղեամն էր դրել նրա վրայ: Գերեզմանատուն տանող ճանապարհը ձգվում էր երկայն, ուղիղ փողոցով, թեթևակի վեր բարձրանալով, որի ծայրին սպիտակին էր տալիս գերեզմանատան դարբասի կամարը, որ սե, մշտաբաց, փայլող ատամներով շրջապատուած ահռելի երախի էր նմանում: Վէրայի գերեզմանը գտնվում էր գերեզմանատան խորքում, որտեղ վերջանում էին աւազով փոռուած ճանապարհները և հ. Իգնատիոսը երկար ժամանակ թափառում էր նեղլիկ, ծուռ ու մուռ գծերով՝ կանաչով պատած, ամենքից մոռացուած և երեսի վրայ ձգուած փոքրիկ դամբարան բլրակների ծայրերը լիզող անցնող կածանների մէջ: Տեղ-տեղ պատահում էին մի կողմ թեքուած, կանաչաւուն գոյն ստացած յուշարձաններ, ջարդուած վանդակապատներ և մեծ, գետնի մէջ պինդ մեխուած, ծանրանիստ գերեզմանաքարեր, որ մի առանձին, ծերութեան յատուկ, քինախնդրութեամբ ճնշում էին իրենց բռնած տեղերը: Այդպիսի գերեզմանաքարերից մէկին էր փարուած Վէրայի գերեզմանը: Նա ծածկուած էր նոր, դեղնած խարձով, իսկ նրա չորս կողմը կանանչապատ էր: Աքիլեակն ու թղկին վերեռում իրար էին խառնել իրենց ճղներն ու իրար փարուել, իսկ կտաւախոտի լայնատարած թուփը փոռւել էր գերեզմանի վրայ: Հ. Իգնատիոսը մի քիչ հանգստանալով, նսյեց չորս կողմը, մի հայեացք ձգեց անամպ, դատարկ երկնքի վրայ, ուր բոլորովին անշարժ կեցած էր հրաշէկ արեր,—և միայն այդ ժամանակ լզգաց այն խորին, ոչ մի բանի հետ չհամեմատուող, գերեզմանատներում թագաւորող անդորրութիւնը, երբ քամու բուքը չկայ և մեռած տերենների շի լսվում: Եւ նորից հ. Իգնատիոսին տիրեց այն միտքը, թէ ոսա անդորրութիւն չէ, այլ լոռութիւն: Այդ լոռութիւնը տարածւում, հասնում էր մինչ աղիւսէ պատերը, ծանը կերպով անցնում էր նրա վրայից և ողողում քաղաքը: Իսկ այդ լոռութեան ծայրն այնտեղ՝ այն գարշաւուն, յամառութեամբ և յարատե լոռող աչքերի մէջ էր կենդրոնացած: Հ. Իգնատիոսի սարսուո պատած ուսերը ցնցուեցին և հայեացքն ընկաւ Վէրայի գերեզմանի վրայ: Նա երկար նայում էր խոտի դեղնած, կարճիկ ցողուններին, որոնք հողախառն պակուած էին ով զիտէ որ քամիների ենթակայ դաշտից և որ դեռ ևս չէր կարողանում երեակայել, որ այնտեղ, այդ խոտի տակ, մի երկու արշին տարածութեան մէջ՝ պառկած էր իր Վէրան: Եւ այդ մերձաւորութիւնը անըմբռնելի էր թվում նրան և իւր հոգու մէջ շփոթութիւն և տարօրինակ մտորանիքներ էր սերմանում: Նա, որի մասին հ. Իգնատիոսը սովորել էր մտածել, իրքև անհռւութեան խաւար ծոցում յաւիտեան կորածի մասին, գտնվում էր

այստեղ, շատ մօտ... և անհնար էր թվում մտածել, թէ նա այնուամենայնիւ չկայ և էլ, երբէք գոյութիւն չի ունենալու: Եւ հ. Իգնատիոսին թվում էր, թէ եթէ որ և էրառ արտասանի, և կամ որ և շարժում անէ՝ Վէրան դուրս կը գայ գերեզմանից և իւր առաջ կը կանգնէ, նոյնչափ գեղեցիկ, բարձրահասակ, ինչպէս որ էր: Եւ ոչ միայն մենակ նա յարութիւն կառնի, այլ և բոլոր մեռելները, որոնք այնքան զգալ են տալիս իրենց ներկայութիւնը իրենց հանդիսաւոր սառն լուսութեամբ: Հ. Իգնատիոսը վերցրեց իւր լայնեզր և գլխարկը, յարդարեց ալեծածան մազերը և շնչաց.

—Վէրա:

Այն զգացումը թէ կողմնակի մէկը կարող էր լսել իրան, անյարմար դրութեան մէջ զցեց հ. Իգնատիոսին, ուստի կան զնելով զերեզմանի վրայ սկսեց դիտել խաչերի վրայից: Ոչ ոք չկար, ուստի և աւելի բարձրածայն կը կնեց.

—Վէրա:

Հ. Իգնատիոսի սովորական ձայնն այս անգամ չոր և ոլահանջող էր, և զարմանալի է, որ այդպիսի ուժով արտայայտուած պահանջը անպատասխան էր մնում:

—Վէրա:

Բարձրածայն ու յարատե հաստատակամութեամբ հնչում էր այդ ձայնը և երբ դադարում էր ըովէապէս, կարծես թվում էր թէ այնտեղ՝ ներքեւ անորոշ պատասխան էր լսվում: Եւ հ. Իգնատիոսը, մի անգամ ևս չորս կողմը դիտելուց յետոյ, մազերը ականջից հեռացնելով, ընկաւ, կոշտ, չոր խոտի վրայ և ականջը մօտեցրեց խարձին:

—Վէրա, ասա:

Եւ հ. Իգնատիոսը սառսուռով զգաց, որ իւր ականջի մէջ է հոսում մտնում ինչ որ գերեզմանական սառսուռ և սառցնում իւր ուղեղը, և որ Վէրան խօսում է,—բոյց խօսում էր նոյն անվերջ լուսութեամբ: Աւելի ու աւելի զարհուրելի և տագնապալի էր դառնում այդ լուսութիւնը և երբ հ. Իգնատիոսը զօռով բարձրացնում, հեռացնում է մեռելի պէս դալկացած գլուխը գետնից, նրան այնպէս էր թվում, թէ շրջապատող օդն ամբողջապէս դողում և սարսում է անդրադարձող լուսութիւնից և որ այդ զարհուրելի ծովը բռնուած է ամենի մրրիկով: Լուսութիւնը խեղդում էր նրան: Սառն ալիքներով անցնում է նրա գլխի վրայով և մազերը փշաքաղում, զարկվում փշրվում է իւր կրծքին, որ հեծեծում էր հարուածների տակ: Ամբողջ մարմնով դողալով, չորս կողմը ձը գելով վայրկեանական և սուռ հայեացքներ, հ. Իգնատիոսը դանդաղօրէն բարձրանալով՝ և երկար, տանջող ճիդ թափելով աշխատում էր ուղեղը մէջքը և դողացող մարմնին հպարտ կեցուածք տալ, որ և յաջողում է նրան: Դիտաւորեալ դանդաղկոտութեամբ հ. Իգնատիոսը թափ է տալիս ծնկները, գլխարկը դնում, երեք անգամ խաչակնքում գերեզմանը և հեռանում հանդարտ, հաստատուն քայլերով, բայց ծանօթ գերեզմանատունը չէ ճանաչում և ուղին կորցնում է:

— Ճանապարհը շփոթել եմ, —քմծիծաղ է տալիս հ. Իգնա-
տիոսը և կանգնում ճիւղավորուող կածանի առաջ: Բայց կան-
գնում է միայն մի վայրկեան և առանց մտածելու, շուռ է գա-
լիս դէպի ձախ, որովհետեւ սպասել ու կանգնել՝ անկարելի է:
Լոռութիւնը հալածում է: Նա բարձրանում է կանաչաւուն գերե-
մաններից, նրանով են շնչում մռայլ, գորշագոյն խաչերը. բա-
րակ, խեղդող հոսանքներով դուրս է թափվում դիակներով յըդ-
փացած գետնի ամեն մի ծակոտից: Հ. Իգնատիոսի քայլերն աւելի
ու աւելի արագանում են: Գլուխը կորցրած, պտոյտ էր գալիս
միենոյն ուղիներով, թռչկոտում էր գերեզմանների վրայից,
վանդապատներին էր դիպչում, ձեռներով բռնում սուր, ժեշտի
թիթեղեայ պսակները, որոնցից վրայի նուրբ վերարկուն ծուէն-
ծուէն էր լինում: Միայն մի միտք դեռ ևս մնացել է գլխումը,
այն է ակատուել այդ տեղից: Այս կողմից այն կողմն է ընկնում և
վերջապէս, աշխատելով ձայն չհանիլ, վազում է իւր ամբողջ բարձր
հասակով, տարօրինակ, օդի մէջ ծածանող վերարկուով և ալեծա-
ծան մազերով: Հանդիպող մարդը գերեզմանից դուրս եկած հան-
գուցեալից այնքան չէր վախենայ, որքան կը վախենար այս ա-
ռանց առաջը նայելու վախող, ցատկող և թևերը թափահարող
զարհուրելի կերպարանք ստացած անձնաւորութիւնից՝ տեսնելով
նրա ծռուած, խելագարի դէմքը, լսելով լայն բաց արած բերնից
դուրս եկող խուլ խրխորցը:

Հ. Իգնատիոսը ամենայն թափով դուրս եկաւ այն փոքրիկ
հրապարակը, որի ծայրին սպիտակին էր տալիս գերեզմանատան
ցածրիկ եկեղեցին: Նախագաւթում՝ ցածրիկ նստարանի վրայ
ննջում էր մի ծերուկ, որ արտաքինից հեռու աեղից եկած ուխ-
տաւոր էր երեսում և նրա մօտ իրար վրայ յարձակուելով, վի-
ճում և հայհոյում էին միմեանց երկու մուրացիկ—պառաւ: Ար-
դէն մութն էր երբ հ. Իգնատիոսը մօտեցաւ իրենց տանը: Օլ-
գա Ստեղանովնայի սենեակում ճրագ էր վառուած: Առանց
վրայի շորերը հանելու և գլխարկը գլխին, փոշու մէջ կորած և
պատառտուած հ. Իգնատիոսը մօտեցաւ կնոջն ու շոքեց:

— Տիրուհի... Օլիա... խղճա ինձ,—հեկեկում էր նա: — Ես
խելագարվում եմ...

Եւ գլուխը սեղանի ծայրին դարկելով, հեկեկում էր ան-
զուսպ, սիրտ կտրելու չափ անզուսպ, ինչպէս մի մարդ, որը
երբէք լաց չի եղել: Եւ նա բարձրացրեց գլուխը, միանգամայն
հաւատացած, որ այս ըոպէիս հրաշք կկատարուի, և իւր կինը
կխօսի և կխղճայ իրեն:

— Հոգեակ, իմ անուշ, ձայնեց նա և իւր ամբողջ հսկայա-
ական մարմնով ձգուեց դէպի ամուսինը, — և հանդիպեց գորշագոյն
աչքերի հայեացըին: Այստեղ ոչ խղճալու և ոչ բարկութեան ար-
տայայտութիւն էր երեսում, Գուցէ կինը և՛ ներում, և՛ խղճում
էր նրան, բայց աչքերի մէջ չէր կարդացւում ոչ կարեկցութիւն
և ոչ ներողամտութիւն: Համբ ու լուռ էին այդ աչքերը: Եւ ամբող-
ջապէս լուռ էր, մութ, ամայացած տունը:

„ՆՈՐ-ՑՈԼՔԵՐ“

Սկսնակ գրողների և պատանիների գրուացքների ժողովածության մեջ ուժը աշխատավոր է այս մասունքների պահանջման առաջին տարրությունը և այս մասունքների պահանջման առաջին տարրը կազմում է այս մասունքների առաջին առաջարկը:

Զեռքիս տակն է սկսնակ գրողների և պատանիների գրուացքների «Նոր-Ցոլքեր» ժողովածուի առաջին գրքոյկը։ Առհասարակ ամեն մի համակրելի գործ արժանի է խրախուսանքի։ «Նոր-Ցոլքեր»-ն էլ որպէս սկսնակների օրգան, անշուշտ արժանի է ուշադրութեան, նամանաւանդ երբ այդտեղ ասպարէզ են իջնում բոլորովին թարմ ոյժեր իրանց լնդունակութիւնները փորձելու։

Կարդամ «Յառաջաբան»-ից մի փոքրիկ կտոր. «Աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ մեր սկսնակ գրողները և պատանիները այնքան էլ յարմարութիւն չունեն իրենց գրուացքները հրատարակելու, և այդ պատճառ է դառնում նրանց յուսահատուելուն։ միւս կողմից էլ չկայ մի թերթ, ամսագիր, որ հաւաքէր առանձնապէս սկսնակ գրողների ամեն տեսակի գրուածքներ՝ թէ ընթերցանութեան և թէ մասսամբ գուցէ նաև դասագրքերին նիւթ մատակարելու համար։ Ուստի մի խումբ ընկերներով, հայ գրականութեան այս պակասն զգալով՝ որոշել ենք խմբագրել պատանիների ու սկսնակ գրողների ամեն տեսակի գրուածքներ և լոյս ընծայել որպէս հաւաքածու միայն այն ժամանակ, երբ ստացած նիւթերը մի որոշ ցանկալի քանակութեան կը հասնին։ Բարի, միանգամայն օգտակար նպատակ, բայց տեսնենք թէ հրքան հարազատ է մնացել «Նոր-Ցոլքեր»-ի յարգելի խմբագրութիւնը իր «Յառաջաբան»-ին։ Բանաստեղծական բաժնի առաջին ոտանաւորը՝ Արշաւիր Բարաեանի «Դժբախտ մօր ողբ»-ը, շատ թոյլ գրուածք է։ Երեսում է, որ հեղինակը դեռ չգիտէ բանաստեղծութիւններ գրելու ամենատարրական կանոնները։ Որպէս զի ընթերցողը մեզ հետ համոզուի բաւական է առաջ բերել ոտանաւորի վերջին տունը։

Ու մայրական զոյգ աչերը
Կաթիլ-կաթիլ արտասուեց
Թրջեց որդու սառ դիակը՝
Սառ ձիւնի մէջ թաթախուած։


Տ-ին Ա. Վշտունիի բանաստեղծութիւնը չի համապատասխանում ժամանակին։ Այսպիսի խոշոր պատմական ըոպէին, երբ ժողովուրդը համակուած է մի ընդհանուր ցաւով, ապրում է վիշտ ու տառապանքի օրերում, երբ նրա կեանքի ծովը յուզվում է, ալիքներ բարձրացնում և անկասկած այդ ալիքները պէտք է հարուածեն բանաստեղծի զգայուն սրտի լարերին, ու հրքան զուրեղ լինի այդ հարուածը, հրքան մեծ և սարսափելի լինին ալիքները, այնքան էլ լարերը պէտք է դառնալի, ողբերգորէն հընչ-

են, արձագանքէն ժողովրդի ցաւերին. Գ. Գրիգորեանի ոտանաւորը նոյնպէս չի համապատասխանում ժամանակին, բացի դրանից վերջին չորս տողում երաժշտութիւնը կաղում է: Յաջող է եղիշէ Տէր- Ռաչատրեանի «Գեղանի մը» բանաստեղծութիւնը, որ ժողովածուի ամենայաջող ոտանաւորը կարելի է համարել. էլ չեմ խօսում Աւիսի «Կը զաս մի օր» ոտանաւորի մասին, որը, երևի, թիւրիմացութեամբ է մտել «Նոր-Ցոլքեր»-ի մէջ:

Գալով մասնաւորապէս արձակներին, պէտք է խոստովանուել, որ համարեա բոլորն էր բշտիկներ են, որոնք դուրս են ժայթքում ամեն մի պատանու ուղեղից, երբ նա վարակվում է այսպէս ասած՝ գրելացաւով: Յիշատակութեան արժանի է միայն Ա. Վշտունիի «Մեծ ճանփին» արձակ բանաստեղծութիւնը, սակայն պէտք է խոյս տալ մէկ անգամ տպագրուած նիւթը երկրորդ անգամ տպագրելուց:

Հստ երեսյթին «Նոր-Ցոլքեր»-ի յարգելի խմբագրութիւնը մտագիր է շարունակել ժողովածուների շարքը, ուստի և խորհուրդ կը տայինք, որ իր յետագայ ժողովածուների մէջ խմբագրութիւնը աւելի աշալուրջ վերաբերուէր թէ՛ նիւթերի ընտրութեանը և թէ նրանց արտաքին թերութիւնների ուղղումներին: Ինչ վերաբերում է գրքի արտաքինին, պէտք է ասած, որ թէ՛ շապիկը և թէ տպագրութիւնը շատ սիրուն և մաքուր են, որոնք նպաստաւոր տպաւորութիւն են թողնում ընթերցողի վրայ:

Ե. Սաղոյեան



ցուցա քայլ մատուցան ան

ընտառապատճեան բնիքավ-շնչառա

շնչառի ուս արդո բնչառ

նաւուանան զնդու նաւա չ անքա առ վարդան

ամիսուանան մշ ու ամիսուանան պատուան ամ ամ-
պա մինարդ մարտանայ ուստայ զայրան ամիսուանան աման
չ ամառա հունար ուստան ուն մ նուանան շրդ անիսու
նայիրան շիտ գուշան ուն ուն նուան զայրան ամ ամիս
չ զայրան ուստան ուն նուան մարտան ամ ամառան ուստան
ուն մասն ու ուստան ուն մարտան ամ ամառան ուստան
ուն մասն ու ուստան ուն մարտան ամ ամառան ուստան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Փառք ձեզ, հերոսներ	Գ. Միկթարեան
Վրէժինդրութեան զանգը	Ն. Հ. Սեւադա
Մայր Հայաստան	Գուրմարկունի
Մենութեան ժամին	Վիշտունի
Աշուն (արձակ բանաստ.)	Ջան-զիր
Պօէտին	Ս. Գալաչեան
Աշուն	Գ. Միկթարեան
Թառամում են ծաղիկներ	Գ. Միկթարեան
Թռչնիկը	Ե. Սաղոյեան
Ախ, ինչու, ինչու	Է. Նազարեան
Հայրենիքիս	Ս. Գալաչեան
Աղօթը (Ստանիսլավ Պահբըշևկուց)	Յ. Յարութիւնեան
* * *	Հ. Մազմանեան
Լոռութիւնը (Լ. Անդրէնի)	Ե. Սաղոյեան
Գրախօսական	Ե. Սաղոյեան
Պոստ-Արկղ	

ՊՈՍ-ԱՐԿՂ


Մեր բոլոր աշխատակիցներին խնդրում ենք նիւթերը գրել
թղթի մի երեսի վրայ, լայն միջանցքներ թողնել տողերի միջև և
առանձին հոգ տանել, որ գրուածքը դիւրընթեռնի լինի գրաշար-
ների համար:

Թիֆլիզ. Գ. Վաթեանին: Զեր ոտանտուորը դժբախտաբար ան-
կարող ենք տպագրել:

,, Ե. Տէր-Խաչատրեանին: Մնաց հետեւեալ անգամին:
Մադրասա. Գէորգ Նազարեանին: Սպասում ենք Զեր նամակին:
Վերին-Ազա. Վիշտունուն: „Նա գնաց“ արձակ բանաստեղծու-
թիւնը մնաց հետեւեալ անգամին: Ուղարկե-
ցէք նորերը:

Ռոտ, Լաբա. Գ. Միսիթարեանին: Ուղարկեցէք արձակ գրուածքներ:
Բաթում. Վահրամ Գարեանին: Զենք կարողանում կարդալ:

Պարզ գրեցէք: Մենք հօ իմաստուն չենք,
որ իմանանք, թէ ինչ էք կամենում ասել:
Ալեքսանդրապոլ. Հ. Տէր-Յարութիւնեանին: Զեն տպուիլ: Կա-
րող էք յետ ստանալ:



Խմբ. ԵՐՈՒԱՆԴ ՍԱՂՈՑԵԱՆ

